

30 JUL 2010

610  
104-104

616.9  
ju-28

STOS YAM T O

Բժիշկ Վ. Ս.Լ. ԽՍ.ՉՍ.ՏՐԵԱՆՑ

№ 6

# ԱՆԴՐԱԴԱՐՁ ՏԻՓԸ

եհ

## ՆՐԱ ԲՈՒԺՈՒՄՆ

1003  
10196



ԻՆՔ. 20 ԿՈՊ.

Պահանք՝ Тифлисъ, Вознесенская ул. 8.  
Кв. Д-ра Хачатуриянца.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էջից ապարան Թ. Մ. ԹՕ.ՈՒՄԵՍՆԻ Քարանդ. № 2

1917

### Ա Ն Դ Ր Ա Դ Ա Ր Զ Տ Ի Փ

Պատերազմի արհաւիրքներից մէկն են և գանազան տարափոխիկ ու վարակիչ հիւանդութիւնները, որ մեծամեծ վնասներ են պատճառում մարդկութեանը, տանելով երբեմն աւելի զոհեր, քան պատերազմի ահաւիր կրակը: Այս հիւանդութիւններից պէտք է յիշել խօլերան, տիֆը իր գանազան տեսակներով, փորճաբիւրքը, արիւնլուծութիւնը և այլն: Ներկայիս մենք մեր գրութեան նիւթ պէտք է առնենք, տիֆը իր երեք տեսակներով՝ անդրադարձ կամ կրկնվող, բնական և սրովայնային տիֆ:

Այս երեք տեսակի տիֆն էլ վարակիչ են, այսինքն մի անհատից անցնում են մի ուրիշի և այդպիսով, կարող են վարակել ամբողջ գիւղեր, քաղաքներ, գօրքեր մասեր և այլն և այդպիսով համաճարա՛յ առաջ բերել:

Ինչպէս ասացինք, այս հիւանդութիւնները մի մարդուց անցնում են միւսին, այսինքն վարակում են. և որպէսզի կարելի լինի վարակման առաջն առնել անհրաժեշտ է իմանալ, թէ ինչ միջոցներով կամ ճանապարհով է հիւանդութիւնը մէկից մի ուրիշին անցնում:

Ամենքին յայտնի է, որ խօլերան անցնում է ջրի, ուտելիքի միջոցով, ժանախտը լուերի և այլն... Իմանալով այս՝ մենք կարող ենք խոյս տալ վարակումից. օրինակի համար գործ ենք ածում եփած ջուր. սրովնետե, ինչպէս գիտենք, եփելուց ջրի մէջ եղած խօլերային բացիլները ոչնչանում են. միւս կողմից մենք ակտուալնութեան ենք ենթարկում և կամ այրում ոչնչացնում ենք այն բոլորը, ինչ որ վարակված է հիւանդածին բացիլներով: Այսպէս, օրինակ, խօլերայով հիւանդի աղբը, փսխածքը, որ առատութեամբ պարուենակում է խօլերային բացիլներ, թափում ենք փոսերի մէջ, վրան օձում

ենք ախտահանելու համար կրի լուծուածք և սալա հողի հաստ շերտով ծածկում. իսկ եթէ վերայիշեալ կեդտոտութիւնները, որ միլիօնաւոր հիւանդածին բացիլներ են պարուենակում, մենք թողնենք գետնի երեսին. անձրենները կը քշեն և կը թափեն գետերի և ջրհորների մէջ, և այդպիսով խօլերան աւելի մեծ ծաւալ կը ստանայ և համաճարակը սուիլի տարածվելով անհամար զոհեր կը տանի, ինչպէս այդ եղել է հին ժամանակները:

Ինչպէս վերն յիշեցին, երեք տեսակի տիֆ կայ:

### Անդրադարձ կամ կրկնվող տիֆ

Անդրադարձ տիֆը մօտ 100 տարի է, ինչ երևան եկել Յւրօպայում և ենթարկվել գիթեական բժիշկների քննութեան, որի շնորհիւ էլ մենք այսօր միանգամայն լրիւ հակացողութիւն ունենք տիֆի այդ տեսակի վերաբերմամբ:

Անդրադարձ տիֆի բոլոր համաճարակների ժամանակ նկատված և հաստատված է, որ այդ հիւանդութիւնը տարածվում է զլխաւորապէս այդատ դասակարգի մէջ, ուր մարդիկ ապրում են ոչ բարեկեցիկ պայմաններում և ուր իշխում է կեղտոտութիւնը և քաղցածութիւնը. սակայն, հարուստ դասակարգն էլ բոլորովին ազատ չէ մնացած տիֆի համաճարակներից, մանաւանդ նրա՛ք, ովքեր շփում են ունեւում հիւանդների հետ՝ բժիշկները, ֆէլդշէրները, գթութեան քոյրերը, սանիտարները և այլն. նոյնպէս նրանք, ովքեր գործ են ունենում հիւանդների հագուստների հետ, լուսացարարները, հին հագուստ առնող-ծախողները:

Յայտնի գիտնական Օշէրմայէրը մանրազննին քրննութեան առնելով կրկնվող տիֆ հիւանդութիւնը գտնում

է, որ այդ ցաւով վարակված հիւանդի արեան մէջ մի տեսակի պոուտակաձև մանրէներ—բացիլներ—են գրտն-վում, որոնց և վերագրում է վարակումն: Սակայն այս-քանը դեռ բաւական չէր, և յետագայում գիտնականները վճռում են այն, թէ ինչպէս, ինչ ճանապարհով մանրա-դիտակային պոուտակաձև բացիլներն ընկնում են մեր արեան մէջ: Այս հարցը պարզելու համար գիտնական Կօխը իր խմբով գնում է Աֆրիկա, ուր սաստիկ տարած-ված է լինում կրկնօղ տիֆը, և տեղն ու տեղը քննու-թեան է առնում ու հաստատում վարակման ճանապար-հը: Նա գտնում է, որ վարակիչ պոուտակաձև մանրէնե-րը (բացիլները կամ, ինչպէս անուանված է, Օրէրմայէրի սպիրօսէդները) մարդու արեան մէջ են մտնում կօպ—բաղլինջ կոչված պարագիղէց, որի ստամոքսում գտնվում են մանրէները: Այնուհետև յետագայ քննութիւնները ցոյց են տալիս, որ այդ մանրէները բաղլինջի ստամոքսի մէջ են ընկնում, երբ նա կծում է կրկնօղ տիֆով հիւանդ մար-դուն, և ծծում արիւնը. այդ բացիլը բաղլինջի ստամոք-սի մէջ աւելի ևս զարգանալով, գուցէ և բազմանալով, այդտեղից կրկին անցնում է մի ուրիշ մարդու, որին այդ նոյն բաղլինջը յետագայում կծում է, սա կատարւում է հետեւալ եղանակով. հիւանդից վարակված բաղլինջը երբ կծելով բարձրիկն առողջ մարդուն, սկսում է ծծել վերջինիս արիւնը, այդ նոյն ժամանակ բաղլինջն իր ստամոքսի բովանդակութեան մի մասն, ուր անտարակոյս գտնուում են կրկնօղ տիֆի բացիլները, ներս է մտցնում առողջ մարդու մարմնի մէջ և այդպիսով վարակում են վերջինիս:

Ահա Գօխի հետազոտութեան արդիւնքը, որի շնոր-հիւ էլ հաստատւած է, որ Աֆրիկայում եղած կրկնօղ տիֆը տարածվելիս է եղել գլխաւորապէս տնդական կը-լօպների միջոցով, իսկ մեզանում, մանաւանդ կովոյ դա-

6/6.9  
 Բ-28

նակի մէջ՝ դիրքերում՝ գիւնտրները վարակվում են մեծ մասամբ ոչիլների միջոցով: Այս իսկ պատճառով էլ տիֆի այս տեսակի տարածումը նկատված է ինչպէս աղքատ գոտակարգի մէջ, նոյնպէս և վախճատակաների, որոնք հնարուստութիւն շունեն մարբութեան վրայ հարկաւոր ուշադրութիւն դարձնելու:

Ինչ վերաբերում է անդրագարձ տիֆի ախտանիշ-ներին, պէտք է ասեմ, որ վերին աստիճանի հաստատուն նշաններ ունին այդ հիւանդութիւնը:

Հիւանդը վարակվելով՝ 5—8 օր ոչ մի նշանով չի գգում իր վարակված լինելը (այս ժամանակամիջոցը գի-տութեան մէջ ընդունված է ԻՆԿՍՈՒԲԱՑԻՈՆՆՅԱՅ ՍԵՐԻՈՒԾ՝ «ժածկված ժամանակամիջոց» դարձուածով), որից յետոյ հիւանդը յանկարծ տաքութիւն է առլիս, որը կարող է 40—41°-ի հասնել. սկսվում է խիստ գլխացու, հիւանդը ասնջվում է մէջքի, ողնաշարի և ոտքերի խիստ ցաւից. իրեն հետեանք վարակվածը ընկնում է սաստիկ թուլու-թեան մէջ: Հիւանդութեան այս շրջանը տևում է մօտ մի շաբաթ, որից յետոյ հիւանդը սաստիկ օրանում է և այդպիսով տաքութիւնը իջնում է սովորական աստիճանի, բայց ոչ վերջնականապէս, այլ ժամանակաւոր, մօտ մի շաբաթ, որից յետոյ կրկին հիւանդութեան ախտանիշնե-րը վերսկսվում են և հիւանդութիւնը անդրագառնում է, կրկնվում է (այս պատճառով էլ տիֆի այս տեսակը ան-ւանված է կրկնօղ կամ անդրագարձ). այս անգամ տա-քութիւնն աւելի կարճ ժամանակ է տևում 4—5 օր որից յետոյ հիւանդը կրկին քրանում է և տաքութիւնը դար-ձեալ իջնում է, որի հետ և հիւանդի դրութիւնը լաւա-նում է (ինչպէս և առաջին անգամ) և հիւանդը սկսում է ուտել, ցաւերը պակասում են, զիշնրները հիւանդը քը-նում է. սակայն դրանով էլ բանը չէ վերջանում,

և մօա մի շաբաթից յետոյ հիւանդութիւնը դարձեալ կրկնվում է մի քանի օրով:

Մինչև վերջին ժամանակներս բժիշկներն այն կարծիքին են եղած, որ անդրադարձ տիֆը միշտ կանօնաւոր կերպով ունենում է վերայիշեալ ընթացքը. սակայն վերջին տարիներս բժիշկները հիմնելով բազմաթիւ հետազօտութիւնների վրայ, պատերազմի վայրերում եղած կրկնվող տիֆով հիւանդների շնորհիւ, եկած են այն եզրակացութեան, որ շատ յաճախ այս հիւանդութիւնը բուրսովին անկանօն ընթացք է ունենում. տաքութիւնը առաջին անգամ ոչ թէ մի շաբաթ է տևում, այլ աւելի կարճ կամ երկար ժամանակամիջոց. նոյնպէս աաքութիւնը իջնելուց յետոյ, նօրմալ դրութիւնը ոչ թէ մօա մի շաբաթ է տևում, այլ շատ յաճախ 10—12 օր. նոյն իսկ պատահում է դէպքեր, երբ 14—16 օր. և մինք այդպիսի դէպքերում, երբ համոզված ենք լինում, թէ հիւանդն արդէն բժշկված է, յանկարծ վրայ է հասնում տաքութիւնը և երեան են դալիս հիւանդութեան ախտանշանները: Պէպք է յիշեմ նոյնպէս, որ հիւարդութեան անդրադառնալը սովորաբար 3 անգամ է լինում, սակայն շատ յաճախ ոչ թէ երեք, այլ 4—5 անգամ է կրկնվում, իսկ երբեմն միայն 1 կամ 2 անգամ:

Հիւանդութեան ընթացքում նկատելի է լինում նոյնպէս սրտի խառնումն, փսխումն, Գրակ աւելի ծանր դէպքում՝ արիւնահոսութիւն ջրից, բժրանից, արիւնալուծութիւն և արիւն միզել. անդրադարձ տիֆին շատ անգամ կցվում են և այլ հիւանդութիւնների՝ իրրև բարդութիւն՝ թոքերի բորբոքումն, սրտի թուլութիւն, որը և շատ յաճախ մահվան պատճառ է հանդիսանում:

Ինչ վերաբերում է բուժման, պէտք է յիշել Էրլիկսան «60ժ» (տես իմ «Միֆիլիս և 606» գրքոյկը), որը և

հանդիսանում է միակ միջոցը. սակայն ներկայումս այդ դեղի դժուարութեամբ ձեռք բերելու շնորհիւ, ոչ ամեն տեղ կարելի է գործ ածել: Մնացած դեղերը, որ մենք տալիս ենք հիւանդին, սովորաբար ուղղված են լինում հիւանդութեան զանազան ախտանշանների դէմ. վերջին ժամանակներս առաջարկված է հօդի գործածութիւնը՝ ինչպէս հիւանդութիւնը թուլացնող միջոց: Մեր բազմաթիւ փորձերը թիւրքական ֆրօնտում՝ ցոյց են տալիս որ եօզը լաւ ազդեցութիւն է գործում սրտի խառնման և վերսիւման դէմ. սկզբներում բժիշկները առաջարկում իէն հօզը առ օրական 3 անգամ 4—5 կաթիլ՝ կաթի մէջ. վերջերս այդ շափը մեծացված է մինչև իսկ 25—30 կաթիլ իւրաքանչիւր անգամ. մենք մեծ քանակութեամբ հօզ չենք նշանակում, ի նկատի առնելով որ հօզը կարող է բորբոքիչ ազդեցութիւն գործել հիւանդի երկամուկներին նկատմամբ. սրտի թուլութեան ժամանակ պէտք է նշանակել կամֆօրա, որը կարելի է առ իւրրև փոշի, իսկ ծանր դէպքերում ներսրակիլ: Մենք շատ անգամ հիւանդի կհանքն ազատած ենք միմիայն առատութեամբ կամֆօրա նշանակելով. պատահել է երբ օրվայ ընթացքում ստիպված ենք եղել 20 անգամ սրտիւմն կատարել:

Մնացած ախտանշաններից պէտք է ուշադրութեան առնել արիւնահոսութիւնը և անմիջապէս միջոցներ ձեռք առնել արիւնահոսութեան առաջն առնելու: Շատ անգամ քթի խորքից առատութեամբ հոսող արեան առաջն առնելը շատ դժուար է լինում և միմիայն հիւանդի արիւնաքամ լինելուց կարելի է լինու՞ ազատել տոմպօնի միջոցով, որը արվում է բերանի խոռոչից «բէլլօք» կոչված գործիքի միջոցով: Առանձին ախտանշանների բուժման մասին մենք երկար կանգ չենք առնի, քանի որ ծանր դէպքերում անհրաժեշտ է բժիշկ հրաւիրել. մի քանի նկատողութիւն անենք սննդի և այնուհետև հիւանդութիւնից խոյս տալու՝ նախազուշական միջոցներ իվերաբերմամբ:

Սնունդը պէտք է լինի հեշտամարս, մանաւանդ աաքութեան ընթացքում. մաշուր (бульон), կաթ, թէյ

և քիչ քանակութեամբ բոլորովին սպիտակ հայ, իսկ երբ տաքութիւնն անցնում է և երևան է գալիս հիւանդութեան աւելի բարւոյք շրջանը (որ կոչվում է «պիրէկալ»), անհրաժեշտ է հիւանդին կերակրել սննդաատու նիւթերով, որպէսզի հիւանդը կազդուրվի և յետագայում կրկնվող նոր հիւանդագին շրջանին կարողանայ դիմանալ:

Նախագգուշական միջոցներէց գլխաւորագոյնն է մաքրասիրութիւնը ինչպէս վերն էլ յիշեցինք, հիւանդութիւնը գլխաւորապէս տարածվում է միջատների, ոջիւնների մոջոցով, այդ պատճառով էլ պէտք է յաճախակի մաքուր լուացվել, հագուստը մաքուր պահել, սպիտակեղէնը բացի լուանալուց նոյնպէս եփ տալ երկար ժամանակ եռացող ջրի մէջ, որպէսզի ոչ թէ միայն ոջիւնները ոչնչանան, այլ և նրանց ձուիկները, որոնք շատ կայուն են լինում և հեշտութեամբ չեն ոչնչանում:

Երբ օրեէ տեղ երևան է գալիս անդրադարձ տիֆը, անհրաժեշտ է ուժգին կերպով կռվել հիւանդութեան տարածման դէմ: Պէտք է բնակարանը յաճախակի աստանուութեան ենթարկել, ամեն օր յատակը մաքուր լուանալ և խոչնդոտ հանդիսանալ գանաղան միջատների մանաւանդ բողիկնջների բազմանալուն, որոնք առանձնապէս սիրում են յատակի ձեղքուածքներում թագնվել, հիւանդին պէտք է առանձնացնել, գուխը մաքուր՝ խոր խուզել, լողացնել և տալ թարմ սպիտակեղէն, որպէսզի հիւանդի մարմնի վրայ միջատներ չը մնան:

Որովհետև հիւանդութեան առանձնապէս զոհ են գնում թուլակազմ մարդիկ, պինտոնները, այդ պատճառով էլ պէտք է բարւոքել թէ պատերազմի դաշտում և թէ թիկունքում սննդի հարցը. պէտք է յիշեմ, որ ուժեղ և բոլորովին առողջ մարդիկ աւելի քիչ են վարակվում, քան վտիտ, թոյլ անձնաւորութիւնները:

Բժ. Վ. Ա. Խաչատրեանց



<< Ազգային գրադարան



NL0267750